- **«Ձայն»**
  **վերլուծական տեղեկատվական լրատուն**
  Նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,
- **լուսաբանել**
  իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:
- **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**
  բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:
- **Ծրագիրն իրականացնում է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն**
  ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:




# Ձայն

♦ ՀԱՄԱՐ 6 ♦ ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2004

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ


# Սոցիալական ապահովագրության պետական համակարգը

## Ի՞նչ է սոցիալական ապահովագրությունը

Ի՞նչ պիտի անել, երբ գալիս է ծերությունը, և մարդը կորցնում է աշխատունակությունը՝ դառնալով սոցիալապես խոցելի: Պատասխանը մեկն է. մինչ ծերություն պետք է ունենալ այնքան խնայողություն, որպեսզի դա բավականացնի ծերության օրերին արժանապատիվ ապրելու համար: Բայց այստեղ ծագում է հարցերի հարցը. արդյո՞ք ծերության տարիների համար անհրաժեշտ նվազագույն խնայողություններ կատարելու որոշումը յուրաքանչյուր մարդու անհատական պատասխանատվությունը պետք է լինի: Ի՞նչ է սպասվում այն մարդուն, որն աշխատել է ամբողջ կյանքում, բայց չի կարողացել խնայողություն անել ծերության օրերի համար: Ահա սրանք են այն հարցերը, որոնք հնչել են անցյալ դարի սկզբներին, ինչի արդյունքում էլ ձևավորվեց սոցիալական ապահովագրության համակարգը:

Նկատե՛ք, մենք օգտագործեցինք «ապահովագրություն», այլ ոչ թե «ապահովություն» տերմինը: Սոցիալական ապահովությունն այն է, երբ պետությունը հոգ է տանում սոցիալապես խոցելի խմբերի, հաշմանդամների, երեխաների, պատերազմի վետերանների, փախստականների և այլ կարիքավոր խմբերի մասին: Իսկ սոցիալական ապահովագրության համակարգը դա մեխանիզմ է, ըստ որի պետությունը հարկադրում է աշխատողներին, որպեսզի նրանք իրենց աշխատելու տարիներին կատարեն որոշակի պարտադիր խնայողություններ, հետագայում, արդեն անաշխատունակության (կամ ծերության) տարիներին օգտագործելու համար: Այսինքն, աշխատանքի միջոցով ստեղծվող ավելացված արժեքի (եկամտի) մի մասը պետությունը հավաքագրում է հատուկ առանձնացված հիմնադրամում (Հայաստանի դեպքում՝ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ), և երբ աշխատողներն անցնում են կենսաթոշակի, այդ գումարները հետ է վերադարձնում, որպես կենսաթոշակ: Այսինքն, հասարակության օգուտի համար, տեղի է ունենում անհատական պատասխանատվության փոխարինում պետական հարկադրանքով: Դա կոչվում է պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգ, որը վերաբերում է բոլոր աշխատունակներին և պետք է լինի արժանապատիվ ծերություն ապահովելու գրավականը: Ծերության թոշակն այն գումարն է, որը պետությունը մեզ է վերադարձնում նախկինում մեր (կամ մեր անվան դիմաց մեր գործատուների) կողմից կատարած պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների դիմաց:

## Ինչո՞վ են տարբերվում սովորական խնայողությունները պարտադիր ապահովագրական մուծումներից

Երբ մենք խնայում ենք գումարներ, դրանցով գնում անշարժ գույք, պահում բանկային հաշիվներում և այլն, ապա դրանք մեզ թվում են «կենդանի փողեր»: Իսկ ահա այն մուծումները, որոնք մենք կատարում ենք մեր կյանքի ընթացքում, որպեսզի հետագայում այն հետ ստանանք կենսաթոշակի տեսքով, մենք խնայողություն չենք համարում: Իրականում դրանք ևս խնայողություններ են: Մենք մուծում ենք ապագայում թոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար, կամ հետաձգում ենք մեր սպառումը: Եվ եթե համոզված լինենք, որ ակնկալվող թոշակը մեր կյանքի համար բավական կլինի, կարող ենք նույնիսկ այլ խնայողություններ չկատարել: Իհարկե, դառն իրականությունն այն է, որ քաղաքականության կամ իրավիճակի փոփոխության նկատմամբ այդ խնայողություններն անպաշտպան են, և մենք չունենք դրանք վերահսկելու հնարավորություն: Արդյունքում հնարավոր են անակնկալներ, և մեր սպասումները կարող են չիրականանալ, ինչպես չիրականացան ներկա կենսաթոշակառուների ակնկալիքները:

## Ինչքա՞ն ենք մուծում և ինչքա՞ն ենք ստանալու.

### սերունդների համերաշխությու՞ն, թե՞ անհատական-կուտակային համակարգ

Կա սոցիալական ապահովագրության երկու տարբերակ: Առաջինի դեպքում կենսաթոշակների չափերը որոշվում են ըստ այն հանգամանքի, թե տվյալ անձն իր կյանքի ընթացքում դրամային արտահայտությամբ ինչքան մուծումներ է կատարել: Այս տարբերակը պահանջում է, որ տվյալ անձի կողմից կատարված մուծումները կուտակվեն տվյալ անձի անհատական հաշվի վրա և հետ վերադարձվեն տվյալ անձին նրա կենսաթոշակի անցնելու տարիներին: Այս անհատական-կուտակային տարբերակի դեպքում աշխատողի կողմից կատարվող մուծումներն իրականում նմանվում են խնայողությունների: Երկրորդ տարբերակն ավելի պարզ է. տվյալ պահին աշխատող սերունդը կատարում է սոցիալական պարտադիր մուծումներ, որի ընդհանուր գումարից ելնելով էլ որոշվում է ներկա կենսաթոշակառուներին վճարվող կենսաթոշակի գումարը: Վերջինը կոչվում է սերունդների համերաշխության սկզբունք: Այս սկզբունքի դեպքում շահում է այն սերունդը, որի հաջորդ սերունդն ավելի շատ է աշխատելու և ավելի շատ մուծումներ է կատարելու: Իսկ կորցնում է այն սերունդը, որի հաջորդ սերունդն իրենից քիչ մուծումներ է կատարելու: Որպեսզի փոքր-ինչ հաշվի առնվեն այն մարդկանց շահերը, որոնք իրենց կյանքի ընթացքում ավելի շատ են աշխատել, կենսաթոշակների հաշվարկման ժամանակ կատարվում է ըստ աշխատանքային ստաժի տարբերակում: Այսինքն յուրաքանչյուրի կենսաթոշակը որոշվում է աշխատանքային ստաժի հիման վրա: Ակնհայտ է, որ այս համակարգի դեպքում դրանք իրար ավելի հավասար կլինեն, քան անհատական-կուտակային համակարգի դեպքում, քանի որ մարդիկ իրարից ավելի շատ տարբերվում են ստացած եկամուտներով, քան թե աշխատած տարիներով: Հայաստանում առայժմ գործում է սերունդների համերաշխության սկզբունքը:

## Ինչպե՞ս է որոշվում կենսաթոշակների չափը

Ներկայիս աշխատող սերունդը մուծում է պարտադիր սոցիալական վճարներ, որի հաշվին ձևավորվում է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կենսաթոշակային ապահովագրության բյուջեն, որից էլ վճարվում են տարիքային կենսաթոշակներ՝ ըստ յուրաքանչյուր թոշակառուի աշխատանքային ստաժի: Այսինքն, կենսաթոշակի բազային դրույքին ավելացվում է աշխատանքային ստաժի յուրաքանչյուր տարվա դիմաց 160 դրամ (հաշվի առնելով անհրաժեշտ նվազագույն աշխատանքային ստաժը): Ցավոք սրտի, մեր այսօրվա կենսաթոշակառուները մեծ վնասներ կրեցին, քանի որ ժամանակին իրենց կատարած մուծումները, որոնք համապատասխանաբար օգտագործվել են իրենց հայրերի կենսաթոշակների վճարման համար, շատ ավելին էին, քան ներկայում իրենց որդիների կողմից կատարվող մուծումներն են: Դրա պատճառները հայտնի են. տնտեսական անկման և արտագաղթի արդյունքում նվազեցին աշխատատեղերը և մուծումներ կատարողների թիվը, ինչպես նաև ստվերային տնտեսության մեծ ծավալների արդյունքում հնարավոր չէ լրիվ օգտագործել տնտեսության ներուժը և գումարներ հավաքագրել կենսաթոշակային հիմնադրամ: Այսպիսով, եղած միջոցները բավականացնում են միայն 8-10 հազար դրամ կենսաթոշակ վճարելու համար: Կենսաթոշակառուների ներկա սերունդը զգալիորեն կորցրեց, որովհետև ինքը մուծել է «լավ» ժամանակներում, իսկ կենսաթոշակ ստանում է «վատ» ժամանակներում: Իսկ կշահի այն սերունդը, որը մուծում է վատ ժամանակներում, սակայն կենսաթոշակ ստանալու է լավ ժամանակներում:

## Վիճակագրություն մտորելու համար

Եթե խորհրդային տարիներին Հայաստանում կար 1.6 միլիոն աշխատող, և բոլորի դիմաց մուծումներ էին կատարվում, քանի որ ստվերային տնտեսության կշիռը փոքր էր, և գրեթե բոլոր աշխատողները պաշտոնապես գրանցված էին, ներկայում սոցիալական վճարներ կատարվում են միայն 0.5 միլիոն աշխատողի դիմաց, մինչդեռ կենսաթոշակ ստանում են նույնքան կենսաթոշակառուներ: Այսինքն, կենսաթոշակների չափերի համար որոշիչ ցուցանիշ հանդիսացող գրանցված աշխատողներ/թոշակառուներ հարաբերակցությունը Հայաստանում կազմում է 1 միավոր, որը ծայրահեղ ցածր ցուցանիշ է: Այս թիվն արդեն ամեն ինչ ասում է. անիմաստ է ակնկալել, որևէ լուրջ կենսաթոշակային համակարգ, եթե մեկ աշխատողը պետք է մուծումներ կատարի մեկ թոշակառուի համար: Նույնիսկ արագ տեմպերով ծերացող եվրոպական երկրներում այդ ցուցանիշը կազմում է 2-3: Բացի անկախության տարիներին

*Շար. հաջորդ էջում*

*Սկիզբը՝ նախորդ էջում*

աշխատատեղերի կրճատումից, այս ցածր ցուցանիշի պատճառը նաև այն է, որ Հայաստանում բոլոր աշխատողները չէ, որ պաշտոնապես գրանցված և հաշվառված են հիմնադրամում: Եթե բոլորը գրանցվեին, այս ցուցանիշը կարող էր ավելի բարձր լինել, ինչը կբերեր միջին կենսաթոշակի համապատասխան չափով ավելացման: Բացի չգրանցված աշխատողներից, Հայաստանում մեծ խնդիր է նաև աշխատավարձերի իրական չափերի թաքցնելը, որի արդյունքում գրանցված աշխատողների մեծ մասի համար մուծվում է միայն օրենքով սահմանված նվազագույն ամսական 5000 դրամը: Այսինքն, եթե մենք աշխատում ենք, բայց պաշտոնապես չենք գրանցվում, կամ եթե ստանում ենք, ասենք, 100000 դրամ, բայց մեր հիմնարկը «թղթի» վրա ցույց է տալիս միայն 20000 դրամ, ապա դրա արդյունքում մեր կենսաթոշակառուները ստանում են շատ ավելի պակաս, քան մենք իրականում կարող էինք տալ: Մեր թոշակառուները ժամանակին հնարավորություն չեն ունեցել այդ մուծումներից խուսափել և արժանապատվորեն պահել են իրենց ավագ սերնդին, իսկ իրենք հիմա տուժում են, քանի որ իրենց որդիների սերունդն ունի վճարներից խուսափելու հնարավորություն և մուծում է շատ ավելի քիչ, քան պետք է մուծել:

## Ինչո՞ւ ենք խուսափում սոցիալական վճարներից. ո՞վ է վճարում սոցիալական վճար և ինչքա՞ն

Սոցիալական ապահովագրության պարտադիր վճարներ կատարում են Հայաստանի տարածքում աշխատող բոլոր ՀՀ քաղաքացիները և նրանց գործատուները: Մեր հասանելիք աշխատավարձից մեր գործատուն պարտավոր է պահել 3 տոկոսը և փոխանցել Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ: Միաժամանակ գործատուն պարտավոր է նաև իր միջոցներից կատարել սոցիալական վճար մեր աշխատավարձի 5-15 տոկոսի չափով՝ կախված աշխատավարձի մեծությունից:

Օրինակ. ես աշխատում եմ Գավառի պետական համալսարանում, որտեղ իմ աշխատավարձը, ըստ իմ դասախոսությունների քանակի և դրույքի, կազմում է ամսեկան 50000 դրամ: Սոցիալական վճարները հաշվարկվում են հետևյալ կերպ. համալսարանն իմ աշխատավարձից պահում է 3 տոկոս (այսինքն՝ 1500 դրամ) և այն փոխանցում է սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ: Դրանից հետո ինձ վճարվելիք գումարը կկազմի 48 500 դրամ, որը եկամտահարկով հարկելուց հետո տրվում է ինձ: Միաժամանակ համալսարանն իր միջոցներից (ոչ իմ աշխատավարձի հաշվին) կատարում է սոցիալական վճար 9500 դրամի չափով: Արդյունքում, իմ և իմ գործատուի միջոցներից, ընդամենը իմ անունով սոցիալական վճար է փոխանցվում 11000 դրամ (1500+9500):

Փաստորեն ստացվում է, որ ի տարբերություն եկամտահարկի, սոցիալական վճարի հիմնական բեռն ընկնում է գործատուի վրա: Այսինքն, պետությունը պարտադրում է գործատուին, որպեսզի այն յուրաքանչյուր վարձու աշխատողի համար մուծումներ անի Հիմնադրամին՝ դրանով իսկ այդ աշխատողի ծերությունն ապահովելու համար: Այս մոտեցումը ձևավորվել է անցյալ դարի սկզբներին և կիրառվում է ամբողջ աշխարհում: Ակնհայտ է, որ տվյալ վճարներից խուսափելն ավելի շատ ձեռնտու է գործատուին, այլ ոչ թե վարձու աշխատողին:

## Կրկին արտագաղթը...

Գաղտնիք չէ, որ հանրապետության աշխատունակ, երիտասարդ բնակչության մեծ մասն աշխատում է արտերկրում՝ այստեղ թողնելով հիմնականում երեխաներին և տարեց ծնողներին: Ստացվում է, որ Հայաստանում աշխատողները ստիպված են վճարել նաև արտերկրում աշխատող մարդկանց ծնողների (ՀՀ քաղաքացիների) համար: Սա նույնպես սոցիալական անարդարության օրինակ է:

## Ինչպե՞ս կատարելագործել մեր սոցիալական համակարգը

Այս բնագավառում պետության կարճաժամկետ և միջինժամկետ գերխնդիրը պետք է լինի ստվերային տնտեսությունը կրճատելու միջոցով մեծացնել հավաքագրվող միջոցները և դա անել այնպես, որ բոլոր գործատուների, ինչպես նաև աշխատողների նկատմամբ վերաբերմունքը լինի արդարացի: Իսկ երկարաժամկետ հատվածում պետությունը պետք է սերունդների համերաշխության սկզբունքից անցում կատարի անհատական-կուտակային համակարգի:

Առաջին խնդրի՝ ստվերային տնտեսության դեմ պայքարի առումով պետք է նշել, որ պետությունը դա չի կարող անել առանց աշխատողների օգնության: Բոլոր աշխատողները պետք է ստիպեն իրենց գործատուներին, որպեսզի վերջիններս իրենց պաշտոնապես գրանցեն այն ձեռնարկություններում, որտեղ իրենք աշխատում են: Բոլորը պետք է հասկանան, որ առանց գրանցվելու աշխատելու արդյունքում նրանք ոչ միայն վնաս են պատճառում ներկա կենսաթոշակառուներին, այլ նաև իրենք իրենց են զրկում ապագայում թոշակ ստանալու իրավունքից: Բացի գրանցվելուց, շատ կարևոր է եկամուտների ճիշտ չափի հայտարարագրումը, քանի որ, եթե Հայաստանում անցում կատարվի անհատական-կուտակային համակարգի, ապա կենսաթոշակի չափը կորոշվի ոչ թե աշխատանքային ստաժով, այլ ժամանակին կատարած մուծումներով: Այսինքն ոչ միայն կարևոր է գրանցվելը, այլ նաև ճիշտ չափով եկամուտների արձանագրումը: Պետք է հասկանալ, որ աշխատանքի շուկայի ներկա ստվերայնությունն առավելապես օգուտ է տալիս գործատուներին, որոնք իրենց աշխատողներին գայթակղելով եկամտահարկ չվճարելու հնարավորությամբ, չեն գրանցում այդ աշխատողներին՝ դրանով իսկ նրանց պատճառելով ավելի մեծ վնաս, քանի որ զրկում են արժանապատիվ ծերության ունենալու իրավունքից:

## Ի՞նչ օգուտներ և վնասներ կբերի անհատական-կուտակային համակարգը

Անհատական-կուտակային համակարգի կողմնակիցները նշում են, որ քանի դեռ անցում չի կատարվել այդ համակարգին, ստվերայնության կրճատում չի լինի: Այսպես, քանի որ սոցիալական վճարների հիմնական բեռը գործատուի վրա է, ապա խիստ կարևոր է, որ աշխատողները պարտադրեն իրենց գործատուներին մուծումներ կատարել: Իսկ ներկա համակարգի դեպքում, երբ այդ մուծումները գնում են «ընդհանուր կաթսա» կապ չեն ունենալու ապագայում իրենց ստանալիք կենսաթոշակի չափի հետ, նվազում են աշխատողի խթանները՝ ստիպելու իր գործատուին օրինական դաշտ մտնել և մուծումներ կատարել:



Անհատական-կուտակային համակարգի դեպքում աշխատողը կստիպի գործատուին մուծումներ կատարել, քանի որ այդ մուծումները գնալու են իր անհատական հաշվին, որից էլ ինքը ստանալու է իրեն հասանելիք տարիքային կենսաթոշակը:

Բայց պետք է նշել, որ այս համակարգը կարող է ստեղծել նաև որոշակի խնդիրներ: Առաջին հերթին այս համակարգի ներդրման արդյունքում կմեծանա վճարվող կենսաթոշակների անհավասարությունը, քանի որ ներկա խոշոր մուծումներ կատարողները ապագայում կստանան ավելի բարձր կենսաթոշակներ: Դրա վտանգավոր կողմն այն է, որ ցածր մուծումներ կատարածներին արժանապատիվ կենսաթոշակ վճարելու համար նոր միջոցներ ներգրավելու անհրաժեշտություն կառաջանա:

## Սոցիալական քարտեր

Սոցիալական քարտերի համակարգին անցումը հնարավորություն կտա մեկ «գրանցամատյանում» հաշվառել մեր աշխատանքային գործունեության ընթացքում կատարած սոցիալական վճարների ընդհանուր գումարը, որից էլ կախված կլինի հետագայում մեր ստացած կենսաթոշակը: Սոցիալական քարտերի ներդրումով կմեծանա գործատուի վրա ճնշումը, քանի որ մի կողմից կդժվարանա ստվերային զբաղվածությունը, իսկ մյուս կողմից՝ աշխատողներն իրենք շահագրգիռ կլինեն ունենալ անհատական սոցիալական հաշիվներ և դրանց վրա տարեցտարի աճող գումարներ: Կա հիմնավորված մտավախություն, որ սոցիալական քարտերի դեմ զանազան անհեթեթ (հիմնականում կրոնա-միստիկական) պատճառաբանությամբ ընթացող պայքարը հիմնականում բխում է խոշոր գործատուների շահերից, որոնք շահագրգռված չեն Հայաստանում նման համակարգի ներդրմամբ:

## Սոցիալական ապահովագրության համաշխարհային վերջին զարգացումները

Անդրադառնանք սոցիալական ապահովագրության համաշխարհային զարգացումներին: Այսօր զարգացած աշխարհը կանգնած է ծերացող բնակչության խնդրի առջև, որը նախ և առաջ վտանգում է սոցիալական ապահովագրության համակարգը: Այդ երկրներում ավելի ու ավելի է պակասում աշխատող/թոշակառու հարաբերակցությունը: Որպեսզի հնարավորություն լինի պահպանել կենսաթոշակների ներկա մակարդակը, որը հատկապես եվրոպական երկրներում շատ բարձր է, անհրաժեշտ է մեծացնել ապագա սերունդներից գանձվելիք մուծումների չափը, որը, ըստ գնահատականների կարող է կործանարար լինել տնտեսության համար, քանի որ դրանք առանց այդ էլ բավական բարձր են: Դա է պատճառը, որ հիմա եվրոպական մի շարք երկրներ իրականացնում են սոցիալական բարեփոխումներ, որոնցով բարձրացվելու է կենսաթոշակի անցման տարիքը և կրճատվելու է կենսաթոշակների չափը: Դրանք խիստ ցավոտ խնդիրներ են այդ երկրների հասարակությունների համար, բայց այդ բարեփոխումների անհրաժեշտությունն այնքան ակնհայտ է, որ նույնիսկ եվրոպական սոցիալիստական կուսակցությունները ստիպված են համակերպվել դրանց հետ:

Մյուս կողմից, բավական հետաքրքիր զարգացումներ են տեղի ունենում ԱՄՆ-ում: Այնտեղ, բացի բնակչության ծերացման հետ կապված կենսաթոշակների վերանայման անհրաժեշտության քննարկումից, ներկայում տեղի է ունենում մի գործընթաց, որը որոշ վերլուծաբանների կողմից գնահատվում է, որպես հրաժարում սոցիալական ապահովագրության ձևավորված համակարգից և անցում, այսպես կոչված, անհատական պատասխանատվության համակարգի, որի դեպքում յուրաքանչյուր ոք ինքը պետք է ապահովի իր ծերությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ ԱՄՆ-ի ներկայի կառավարությունը համարվում է ծայրահեղ պահպանողական, որոնք ընդհանրապես դեմ են մինչ այժմ ձևավորված սոցիալական ապահովության համակարգին: Նախագահ Բուշի վարչակազմն ուզում է ներկայում կատարվող մուծումները թողնել բնակչության տնօրինությանը, որպեսզի իրենք ինքնուրույն խնայողություններ կատարեն և որոշումներ կայացնեն իրենց ծերության վերաբերյալ: Այսպիսով, փորձ է արվում վերադառնալ դասական կապիտալիզմի ժամանակաշրջան, որը գոյություն է ունեցել աշխարհում մինչև 1930-ական թվականների «Մեծ Դեպրեսիան», երբ կարիք առաջացավ վերանայել կապիտալիզմի ավանդական սկզբունքները: Այդ ժամանակ պետության գործառույթները խիստ սահմանափակ են եղել, և ավելի է կարևորվել է յուրաքանչյուր անհատի և ընտանիքի անձնական պատասխանատվությունն իր ներկայի և ապագայի նկատմամբ:

## Եզրահանգումներ

Հայաստանում սոցիալական ապահովագրությունը ներկայում սիմվոլիկ է, քանի որ աշխատողների մի զգալի մաս ներգրավված չի այդ գործընթացի մեջ, իսկ ներգրավվածներից շատերը վճարում են շատ ավելի քիչ, քան պետք է վճարեին: Այսպիսով, մեր երկրում իրականում առաջնահերթ է անհատական պատասխանատվությունը, այլ ոչ թե պետական հոգածությունը: Այդ առումով մենք գտնվում ենք, այսպես կոչված, մինչբարեփոխումային կապիտալիզմի ժամանակահատվածում:

Ըստ տարբեր հաշվարկների, եթե Հայաստանում սոցիալական ապահովագրությունը լիարժեք գործեր, հնարավոր կլիներ ապահովել առնվազն 2.5-3 անգամ ավել կենսաթոշակներ: Դրա համար խիստ կարևոր է հասարակության տարբեր շերտերում տվյալ հարցի կապակցությամբ գիտելիքների բարձրացման միջոցառումների իրականացումը: Դա մեր քաղաքացիներին հնարավորություն կտա ավելի լավ պատկերացնելու սոցիալական ապահովագրության համակարգի գործունեությունը և վճարումներից խուսափումների ծանր ազդեցությունն իրենց, իրենց ծնողների և իրենց երեխաների վրա, որը վերջին հաշվով անդրադառնում է երկրի անվտանգության վրա:


**ՁԱՅՆ**

**Հիմնադիր և հրատարակիչ (լրատվական գործունեություն իրականացնող)**
«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 28-2,
Վկայական՝ 03 Ա 065178, տրված՝ 28/06/04

**Թողարկման պատասխանատու**
Ակսել Թևոսյան

**Խմբագիր**
Վարազդատ Կարապետյան

**Ծրագրի ղեկավար**
Մուշեղ Թումասյան

**Լուսանկարները**
ԵրՄարի

**Տպաքանակը**
2200 օրինակ
Տարածվում է անվճար:

**Խմբագրության հասցե**
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48
Հեռ./ֆաքս: (374 1) 234 420,
**www.edrc.am**
**dzayn@edrc.am**

**Ձայնը** հրատարակվում է **«Օքսֆամ»** ՄԲ աջակցությամբ:

Oxfam